

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ձեր ծննդյան 60-ամյակի կապակցությամբ ընդունեցեք, հարգելի կաթողիկոս, ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի և անձամբ իմ անունից սրտագին շնորհավորանքներ և Ձեր առողջության համար լավագույն բարեմաղթություններ:

Ձեր եռանդուն հայրենասիրական գործունեությունը հայ եկեղեցու հավատացյալների շրջանում, աշխարհի շատ երկրներում, Ձեր անդուլ պայքարը հանուն խաղաղության, խոր ճանաչում է գտել մեր երկրի հասարակայնության կողմից և արտասահմանի հառաջադիմական շրջանակներում: Սովետական կառավարությունը բարձր է գնահատում Ձեր ազնիվ ջանքերը՝ պարգևատրելով Ձեզ Ձեր վաթսունամյակի առթիվ «Պատվո նշան» շքանշանով:

Թույլ տվեք մի անգամ ևս շնորհավորել Ձեզ այդ բարձր պարգևի համար և ցանկանալ Ձեզ նորանոր հաջողություններ Ձեր հայրենասիրական գործունեության ասպարեզում՝ ի փառս խաղաղության հաստատման և ժողովուրդների միջև բարեկամության:

Խորին հարգանքներով՝

Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎ

ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ

6 հոկտեմբերի 1969 թ.,
Ք. Մոսկվա